

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 26 » մայիսի 2012թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԴԵԿԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույն ընթացակարգը սահմանում է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ ԳՊՄԻ) ֆակուլտետ(ներ)ի դեկան(ներ)ի պաշտոնի տեղակալման թեկնածուների առաջադրման, ընտրությունների անցկացման և դեկանի պաշտոնում հրամանագրման կարգը:
- 1.2 Ֆակուլտետի գլխավոր պաշտոնատար անձը ֆակուլտետի դեկանն է, որն ընտրվում է ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի նիստում փակ (զաղտնի) քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով և պաշտոնում հրամանագրվում է ԳՊՄԻ-ի ռեկտորի կողմից: Դեկանի աշխատանքը վարչական և գիտամանկավարժական է: Նույն անձը, անկախ ֆակուլտետի վերամիավորումից, վերանվանումից կարող է դեկանի պաշտոն զբաղեցնել ոչ ավելի, քան երկու հնգամյա ժամկետ անընդմեջ (**լրամշակված՝ 30.08.2013թ.**):
- 1.3 Ֆակուլտետի դեկանն այլ պաշտոն չի կարող զբաղեցնել:

2. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

- 2.1 Դեկանի ընտրությունները կազմակերպվում են ԳՊՄԻ-ի ռեկտորի հրամանով, որն ընտրություններից առնվազն 30 օր առաջ ներկայացվում է համապատասխան ֆակուլտետին, հրապարակվում ԳՊՄԻ-ում (հայտարարությունը փակցվում է վարչական մասի և համապատասխան ֆակուլտետի հայտարարությունների տախտակներին) և տեղադրվում ԳՊՄԻ-ի պաշտոնական կայքում:

- 2.2 Դեկանի պաշտոնի թեկնածություններն առաջադրվում են ԳՊՄԻ-ի տվյալ ֆակուլտետի պրոֆեսորներից (դոկտորներից) կամ առնվազն 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ ունեցող գիտությունների թեկնածու, դոցենտներից:
- 2.3 Ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի թեկնածուներ կարող են առաջադրվել ինստիտուտի այլ ֆակուլտետների պրոֆեսորներից /դոկտորներից/, ինչպես նաև առնվազն 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ ունեցող գիտությունների թեկնածու, դոցենտներից, որոնց ուսումնական ծանրաբեռնվածության առնվազն 25 %-ն իրականացվում է տվյալ ֆակուլտետի ակադեմիական խմբերում:
- 2.4 Ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածությունում կարող են առաջադրվել նաև այլ բուհերից և գիտահետազոտական կազմակերպություններից նույն պայմաններին բավարարող և ինստիտուտում վերջին 5 տարիների ընթացքում 0,5 դրույք ծանրաբեռնվածությամբ համատեղող պրոֆեսորները և գիտությունների թեկնածու, դոցենտները:
- 2.5 Դեկանի պաշտոնի թեկնածուները առաջադրվում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների (ամբիոնների, գիտական լաբորատորիաների) կողմից կամ ինքնառաջադրմամբ:
- 2.6 Թեկնածուների առաջադրումը դադարեցվում է հայտարարության հրապարակումից 30 օր հետո: Թեկնածուները ԳՊՄԻ-ի ընդհանուր բաժնի վարիչին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
- ա) ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրման դեպքում՝ նիստի արձանագրությունից քաղվածք և թեկնածուի համաձայնությունը (դիմում-հայտը), իսկ ինքնառաջադրման դեպքում՝ դիմում՝ հասցեագրված ռեկտորին,
 - բ) կադրերի հաշվառման անհատական թերթիկ,
 - գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
 - դ) համառոտ ինքնակենսագրություն,
 - ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենները,
 - զ) գիտական աստիճան(ներ)ը և գիտական կոչում(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը,
 - է) տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,
 - զ) տվյալներ պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:
- 2.7 Առաջադրման արդյունքները և անհրաժեշտ փաստաթղթերը ռեկտորը մակագրում է մրցույթային հանձնաժողովին:
- 2.8 Մրցույթային հանձնաժողովի քննարկումից հետո դեկանի պաշտոնի թեկնածուների ցուցակը, որում ըստ այբբենական կարգի նշվում են թեկնածուների անունը և ազգանունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը, ինչպես նաև նրանց առաջադրած կառուցվածքային ստորաբաժանումները (ինքնառաջադրման դեպքում՝ նշում այդ մասին), ԳՊՄԻ-ի գիտական քարտուղարը ԳՊՄԻ-ի գիտխորհրդի նիստից 10 օր առաջ հրապարակում է ԳՊՄԻ-ում (այն փակցվում է վարչական մասի և

համապատասխան ֆակուլտետի հայտարարությունների տախտակներին և տեղադրվում ԳՊՄԻ-ի պաշտոնական կայքում) և այդ մասին ծանուցում դեկանի թեկնածուներին:

3. ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

- 3.1 Գիտխորհրդի նիստում դեկանի ընտրության հարցի քննարկումը սկսվում է նախագահողի կողմից թեկնածուների ցուցակի ներկայացմամբ:
- 3.2 Գիտխորհրդի նիստին դեկանի թեկնածու(ներ)ի ներկայությունը պարտադիր է: Թեկնածու(ներ)ի նրա գրավոր համաձայնության դեպքում, գիտխորհուրդը, լսելով նախագահողի պարզաբանումները բացակայող թեկնածուի մասին, ընդունում է որոշում թեկնածությունը նիստում քննարկելու կամ քննարկումից հանելու վերաբերյալ:
- 3.3 Ծրագրային ելույթի համար նիստի նախագահողը ձայնը տալիս է դեկանի պաշտոնի թեկնածուներին՝ ըստ ցուցակի: Ելույթի տևողությունը որոշում է գիտխորհուրդը:
- 3.4 Նախագահողի առաջարկությամբ յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո խորհրդի անդամները և հրավիրված անձինք կարող են հարցեր տալ: Հարցերը սահմանափակվում են նախագահողի առաջարկով, գիտխորհրդի որոշմամբ:
- 3.5 Թեկնածու(ներ)ի ծրագրային ելույթներից հետո սկսվում է քննարկումը, որին կարող են մասնակցել ինչպես գիտխորհրդի անդամները, այնպես էլ հրավիրվածները:
- 3.6 Ելույթների համար հատկացվող ժամանակը որոշում է գիտխորհուրդը: Անհրաժեշտության դեպքում գիտխորհրդի համաձայնությամբ նախագահողը կարող է երկարացնել ելույթ ունեցողին հատկացված ժամանակը:
- 3.7 Թեկնածությունների քննարկումը դադարեցվում է նախագահողի առաջարկությամբ՝ գիտխորհրդի որոշմամբ:
- 3.8 Քննարկումների ավարտից հետո թեկնածու(ներ)ին տրվում է լրացուցիչ ելույթի հնարավորություն: Ելույթի համար հատկացվող ժամանակը որոշում է գիտխորհուրդը:
- 3.9 Քննարկման ընթացքում թեկնածուն կարող է հայտարարել ինքնաբացարկ:

4. ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՅԿԱՅՈՒՄԸ

- 4.1 Քննարկումներից հետո թեկնածու(ներ)ի վերաբերյալ գիտխորհուրդը ընդունում է որոշում փակ (գաղտնի) քվեարկություն կազմակերպելու մասին:
- 4.2 Նախագահողը գիտխորհրդի անդամներին ներկայացնում է փակ (գաղտնի) քվեարկության կարգը:
- 4.3 Նախագահողի առաջարկով և գիտխորհրդի որոշմամբ խորհրդի անդամներից ընտրվում է 3 հոգուց ոչ պակաս (կենտ թվով) հաշվիչ հանձնաժողով՝ փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար: Թեկնածուները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

- 4.4. Մեկ թեկնածուի դեպքում քվեաթերթիկը պետք է ունենա հավելված 1-ում տրված տեսքը, մեկից ավելի թեկնածուների դեպքում՝ հավելված 2-ում տրված տեսքը:
- 4.5. Հաշվիչ հանձնաժողովը գիտխորհրդի յուրաքանչյուր անդամի տալիս է մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է ԳՊՄԻ գիտխորհրդի անդամացուցակում:
- 4.6. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (Հավելված 3): Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության:
- 4.7. Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝
- 4.7.1. թողնված է «կողմ» կամ «դեմ» բառը (մեկ թեկնածուի դեպքում),
- 4.7.2. քվեարկված է միայն մեկ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ» կետի օգտին (մեկից ավելի թեկնածուների դեպքում): Որևէ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ» կետի օգտին քվեարկելու համար համապատասխան տողի վանդակում կատարվում է նշում:
- Մնացած դեպքերում, ինչպես նաև քվեաթերթիկում չնախատեսված նշումների, ընդգծումների և այլ նշանների առկայության դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր: Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը:
- 4.8. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, որից հետո գիտխորհուրդը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:
- 4.9. Դեկանի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է գիտխորհրդի քվեարկությանը մասնակցած անդամների պարզ մեծամասնությունը:
- 4.10. Գիտխորհուրդը հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալները զեկուցելու հիման վրա ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝
- 4.10.1. ֆակուլտետի դեկան ընտրվելու մասին,
- 4.10.2. կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,
- 4.10.3. ընտրությունները չկայացած ճանաչելու մասին,
- 4.10.4. ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:
- 4.11. Մեկից ավելի թեկնածուների դեպքում որևէ թեկնածուի կողմից ԳՊՄԻ-ի գիտխորհրդի ներկա անդամների ձայների կեսից ավելին չհավաքելու դեպքում նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են՝
- 4.11.1. առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուները
- 4.11.2. առավելագույն ձայներ ստացած առաջին թեկնածուն և նույնաքանակ ձայներ ստացած երկրորդ ու հաջորդ թեկնածուները կամ հավասար առավելագույն ձայներ ստացած երկու և ավելի թեկնածուները:
- 4.12. Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն Ընթացակարգին համապատասխան: Կրկնակի քվեարկության դեպքում ընտրված է համարվում գիտխորհրդի քվեարկությանը մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությունն ստացած թեկնածուն:
- 4.13. Դեկանի ընտրությունը համարվում է չկայացած, եթե

- 4.13.1. դեկանի պաշտոնի միակ թեկնածուն չի ստացել գիտխորհրդի քվեարկությանը մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությունը,
- 4.13.2. կրկնակի քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել գիտխորհրդի՝ քվեարկությանը մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությունը:
- 4.14. Ֆակուլտետի դեկանի ընտրության արդյունքները հաստատվում են գիտական խորհրդի նիստում՝ բաց քվեարկությամբ, իսկ որոշումը ներկայացվում է ռեկտորին՝ հրամանագրման:
- 4.15. Դեկանի ընտրական գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը գիտխորհրդի նիստի արձանագրության հետ միասին ներկայացվում են ռեկտորին:
Դեկանի ընտրությունների գործընթացում ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի, ԳՊՄԻ Կանոնադրության և սույն ընթացակարգի խախտումների ի հայտ գալու դեպքում ռեկտորը պատճառաբանված գրավոր որոշմամբ ԳՊՄԻ-ի գիտական քարտուղարին է վերադարձնում ֆակուլտետի դեկանի թեկնածուի գործը՝ 10 օրյա ժամկետում կրկնակի քննարկելու և քվեարկություն կազմակերպելու համար:
- 4.16. Առանձնահատուկ դեպքերում (նոր ստեղծվող ֆակուլտետ, դեկանի պաշտոնի թեկնածության բացակայություն, չկայացված կամ անվավեր ճանաչված ընտրություն) ռեկտորն իրավասու է մինչև 1 տարի ժամկետով դեկանի պաշտոնում հրամանագրել սույն ընթացակարգի 2.2. կետում սահմանված պահանջները բավարարող անձի և հրամանագրման ժամկետի ավարտին կազմակերպել դեկանի ընտրությունների նոր գործընթաց:

5. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ՝ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ

- 5.1 ԳՊՄԻ-ի ռեկտորն ընտրված թեկնածուի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան հրամանագրում է ֆակուլտետի դեկանի պաշտոնում՝ 5 տարի ժամկետով:
- 5.2 Պայմանագիրը կարող է լուծվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.3 Ֆակուլտետի դեկանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում ռեկտորը նշանակում է դեկանի նոր ընտրություններ՝ սույն ընթացակարգի համաձայն:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

Գիտխորհրդի _____ նիստում (արձանագրություն թիվ ____)
դեկանի

տարեթիվ, ամսաթիվ

փակ (գաղտնի) քվեարկության

Կողմ

Դեմ

թեկնածուի ազգանուն, անուն

Թեկնածությանը կողմ լինելու դեպքում թողնվում է «Կողմ» բառը, ջնջվում՝ «Դեմ» բառը, իսկ դեմ լինելու դեպքում թողնվում է «Դեմ» բառը, ջնջվում՝ «Կողմ» բառը:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

Գիտխորհրդի _____ նիստում (արձանագրություն թիվ _____)

տարեթիվ, ամսաթիվ

դեկանի փակ (գաղտնի) քվեարկության

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	
1.	
2.	
3.	
4.	
5.	
6. ԲՈՒՆՈՒՄ ԴԵՍ ԵՄ	

Որևէ թեկնածուի կողմ լինելու կամ բոլորին դեմ լինելու դեպքում քվեաթերթիկում համապատասխան տողի վանդակում կատարվում է նշում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է ԳՊՄԻ գիտխորհրդի

տարեթիվ,

ամսաթիվ

նիստում (արձանագրություն թիվ _____) հետևյալ կազմով՝

1. _____
ազգանուն, անուն

2. _____
ազգանուն, անուն

3. _____
ազգանուն, անուն

ԳՊՄԻ-ի գիտխորհրդի _____ անդամներից ներկա էին _____-ը:

Քվեարկվել է _____ ֆակուլտետի դեկանի պաշտոնի
ֆակուլտետի անվանումը

թեկնածությունը :

Քվեարկությանը մասնակցել են ԳՊՄԻ գիտխորհրդի թվով _____
անդամներ:

Բաժանվել է _____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

- միակ թեկնածուի դեպքում.

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ

- մեկից ավելի թեկնածուների դեպքում.

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ

Անվավեր քվեաթերթիկների քանակը _____:

Փակ (զաղտնի) քվեարկության արդյունքով

ընտրված է (ընտրված չէ) _____ ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

ազգանուն, անուն

ֆակուլտետի անվանումը

Կամ՝

Փակ

(զադանի)

քվեարկության

արդյունքով

ֆակուլտետի անվանումը

Ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում ֆակուլտետի դեկանի պաշտոնում, իսկ ներքոհիշյալ թեկնածուները մասնակցում են կրկնակի քվեարկությանը.

1. _____

ազգանուն, անուն

2. _____

ազգանուն, անուն

3. _____

ազգանուն, անուն

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____

ստորագրություն

ազգանուն, անուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. _____

ստորագրություն

ազգանուն, անուն

2. _____

ստորագրություն

ազգանուն, անուն

3. _____

ստորագրություն

ազգանուն, անուն